

տի մեր ազգին արմատական և հիմ-  
նական բարիք մ' ընելու համար, ա-  
մենքս պիտի ջանանք տգիտութեան  
իշխանութիւնը կործանել, մոքերը  
ճշմարտութեան պատրաստել սրտե-  
րը բարոյականութեան վարժեցնել:  
Եւ այս ուրիշ բանով ըստիր, եթէ  
ոչ մեր խորին ուշադրութիւնը մեր  
ազգային կրթութեան և գաստիարա-  
կութեան վրայ դարցնելով: Հետեւա-  
պէս աւելի ուրախալի էր դաստիարա-  
կութեան վերաբերեալ յօդուածներ  
ընդունիլ ձեզմէն եւ հրատարակել,  
քան թէ այն տիսուր նկարագիրը, ո-  
րով նկարագրած էիք մի քանի անձանց  
արարքներն :

— Ենդղիացի գիտնական հպիսկու-  
պոս մի , ճանապարհորդելով ՚ի Պա-  
ղէստին եւ փափաքելով Արեւելեան .  
Քրիստոնէից նկատմամբ տեղեկու-  
թիւններ քաղել , այցելութեան եկաւ  
մեր || . Պատրիարքին և սոյն այցելու-  
թեան ժամանակ , որ քանի մի ժամ  
տեւեց , երկարօրէն խօսակցեցաւ || .  
Պատրիարքի հետ , և մեր ազգայնու-  
թեան , Եկեղեցւոյ և դաւանութեան  
մասին կարեւոր ծանօթութիւններ  
ստանալով մեծաւ գոհութեամբ մեկ-  
նեցաւ , ցաւ յայտնելով միայն որ  
ցարդ խիստ թերի գաղափար ունե-  
ցած են մեր Ացքի և Եկեղեցւոյ նը-  
կատմամբ :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Գաղաքիս նորընտիր կառավաշ-  
րին Վ սեմափայլ Ալի Պէյ ամսոց 17  
ին քաղաքս ժամանեց , որում դիմա-  
ւորուած էին երեք Պատրիարքու-  
թեանց և բոլոր Հիւպատոսարանաց  
թարգմաններն եասախօճիներով հան-  
գերձ : Օգն գեղեցիկ էր և քաղաքիս  
քնակչոց զրեթէ մեծ մասն ձանա-  
պ որհաց վերաց կըսպասէին նորեկ կա-  
ռավարչի հանդիսաւոր մուտքն տես-  
նելու : Իսկ 19 իւ ՚ի ներկայութեան  
բոլոր սրտածնակալաց , թարգմանաց  
և քաղմախուռան հանդիսականաց  
Վ սեմ կառավարչի հաստատութեան  
կայսերական Հրավարտակն կարդա-  
ցուեցաւ և այնուհետեւ պաշտօնա-  
կան այցելութիւններն սկսան :

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

## ՆՈՐ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Յօվիւնաց Ա. Ա. Առաքելուս

Այսն նոր հրատարակութիւնն .  
յորմէ մի օրինակ նուելը զբկած է  
Մէջ . Հեղինակն՝ Ա. Ամուսյո Թան-  
գարանին , դիւքուսոց եղանակաւ յօ-  
րինուած է նորավարժից համար :

Կան արդէն քանի մի ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ և ահա ՄԵծ,  
Սուրբն եւս ներկայ ՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Կը  
մատուցանէ Ազգային դպրոցաց . մայ-  
քենի լեզուի ուսումն գիւղացնելու  
համար :

Ուրախ եմք մեք , որ մեր մայրենի  
լեզուի ուսումն օր աւուր կարեւո-  
րութիւն կը ստանայ և նորանոր դա-  
սագրքեր կը պատրաստուին և այն ու-  
րախութեամբ կը շնորհաւորեմք Պ .  
Առողջնի նոր աշխատասիրութիւնն :

### Ֆ Ն Ն Ա Կ Ա Ն Կ Բ Օ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տ . Սահակ Քահանայի Տ . Առաջեւան :

Արժանապատիւ Հեղինակն մի օ-  
րինակ նուեր զրկած է Ա . Աթոռոցս  
Թանդարանին սոյն նոր երկասիրու-  
թիւնն , որ բաւականին ընդարձակ է  
և կը պարունակէ կարեւոր տեղեկու-  
թիւններ Կրօնագիտական ուսման նը-  
կատմամբ :

Մեր Քահանայական դասուն մէջ  
մսիթարական երեւոյթ մ 'է Արժ .  
Սահակ Քահանայի ԿրօնԱԳԻՏՈՒ-  
ԹԻՒՆՆ , յորում յայտնապէս կը տես-  
նուի , որ իւր կոչման համեմատ , ու-  
սումնափրած է Ա . Գիրքն , Ա . Հարց  
դրուածներն և Քրիստոնէական կրօնի  
արտաքին եւ ազդացին ջատագոլու-  
թիւններն : Կրօնական ուսմունքներն ,  
յօրէ անտի Քրիստոնէութեան Ազգի  
մերոց , միակ միջոց եղած են մեր ազ-  
դացին բարոյական զարգացման և մը  
խիթարութեան ՚ի հալածանս եւ ՚ի  
վիշտ : Հետեւապէս ներկայ անտար-  
բերութեան ժամանակիս մէջ ոլ որ  
նոյն կրօնական եռանդն բանիւ եւ  
դրով արծարծել կը ջանայ՝ մեծ գործ  
կը գործէ :

1. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԵՆԱՐԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱ-  
ԿԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ :

2. ՀԱՄԱՐՈՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱ-  
ՅՈՅ ԴՊՐԱՏԱՆՑ ՏՎՈՅ ՀԱՄԱՐ :

3. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻ ՔԱՂԱ-  
ՔԻՆ , ՀԱՆԴԵՐՁ ՏԵՍԱՐԱՆՑՈՅՑ  
ՊԱՏԿԵՐՈՔ :

4. ՆԵՐՄԵՍ Ե . ԿԱԹՈՂԻԿՈՍ Ա-  
ՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՅ :

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԻՄՈՒ :

6. ԺԼԱՏ , ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ :

Վերոգրեալ գրքերէն երկու երկու  
օրինակ նուեր զրկած է Ա . Աթոռոցս  
թանդարանին ՄԵԾ . Հեղինակն Պ .  
Յովշաննէս Տ . Աբրահամեան որ Ուս-  
տովլքաղաքի մէջ յատուկ Տպարան ,  
Վիմագրատուն եւ Գրատուն ունի ,  
թէ կը շարագրէ և թէ կը տպագրէ :  
Հրապարակաւ կը մատուցանեմք մէր  
շնորհակալութիւնն սոյն գործունի Հա-  
յուն , ոչ միայն իւր նուերներու մա-  
սին , այլ և իւր գովանի ջանասիրու-  
թեան :

### Ց Ա Ն Կ Ն Ի Ւ Թ Ո Յ

ՅՈՒՆՎԱՐ

Ա Ա Ր Տ Ի .

Ա . Աթոռոցս ընդհանուր Ժողովց  
1874ի առաջն բացումն .

Ի՞նչ պիտի լինէր ընկերութեան  
վիճակը , եմէ Քրիստոնէու-  
թիւնը չերեւէր բնաւ աշխար-  
հի վերայ .

9 . 36 . 54 . 77